




**Չեկույցը
պատրաստվել է ՀՀ
կառավարության
աջակցությամբ**



**«Իրազեկ
քաղաքացիների
միավորման
Ստեփանակերտի
գրասենյակ» ՀԿ**

**ԱՐՑԱԽԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
2019 Թ.
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-Ի
ՏԻՄ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴԻՏԱՐԿՄԱՆ
ՉԵԿՈՒՅՑ**



2019 թ. սեպտեմբերի 8-ի
Արցախի Հանրապետության ՏԻՄ ընտրությունների
կարճաժամկետ դիտարկման

Ձեկույց

«Իրազեկ քաղաքացիների միավորման Ստեփանակերտի գրասենյակ» ՀԿ

Ստեփանակերտ, 2019

2019 թ. սեպտեմբերի 8-ին կայացած Արցախի Հանրապետության ՏԻՄ ընտրությունների դիտորդական առաքելությունը և սույն զեկույցի պատրաստումն իրականացվել է ՀՀ կառավարության դրամաշնորհի շրջանակներում:

Սույն զեկույցում ներկայացված տեսակետները կարող են չարտահայտել ֆինանսավորող կառույցի տեսակետը:

Բովանդակություն

Նախաբան	5
Տեղամասերի մատչելիություն և կահավորում	6
Հանձնաժողովի առավոտյան նիստ	8
Քվեարկության ընթացք	10
Քվեարկության ընթացքում իրադրությունը տեղամասերի շրջակայքում	13
Ձայների ամփոփում	14
Մեղիա մշտադիտարկում	15
Ամփոփում	23
Առաջարկություններ	23

Նախաբան

2019 թ. սեպտեմբերի 8-ին Արցախի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում «Իրազեկ քաղաքացիների միավորման Ստեփանակերտի գրասենյակը», «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ի հետ համագործակցությամբ, կարճաժամկետ դիտորդական առաքելություն է իրականացրել թվով 40 ընտրատեղամասերում: Տեղամասային կենտրոններից դուրս իրավիճակն ուսումնասիրելու, ինչպես նաև առանձին տեղամասերում խնդիրների կանխման և լուծման նպատակով գործել է 5 դիտորդական շրջիկ խումբ, որոնք այցելել են 70 ընտրական տեղամաս: Առաքելության մեջ ներգրավված է եղել 90 դիտորդ, 5 իրավաբան, 9 մուտքագրող և այլ մասնագետներ:


Դիտորդական առաքելության շրջանակներում իրականացվել է 100 դիտորդի վերապատրաստում: Բացի բուն դիտորդական առաքելությունը, ծրագրի շրջանակներում Արցախի Հանրապետության ոստիկանության հետ միասին իրականացվել է նաև ոստիկանների վերապատրաստում, ինչպես նաև պատրաստվել և Արցախի հեռուստատեսության եթերով հեռարձակվել են ընտրողների ուսուցման տեսահոլովակներ:

Արցախի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների 2019 թվականի սեպտեմբերի 8-ի ընտրություններին մասնակցելու նպատակով Արցախի Հանրապետության 228 համայնքներում առաջադրվել են համայնքի ղեկավարի 416 թեկնածուներ և համայնքի ավագանու 1401 թեկնածուներ: Մինչև քվեարկության օրը ինքնաբացարկ են հայտնել համայնքի ղեկավարի 6 և ավագանու անդամների գրանցված 7 թեկնածուներ:

Տեղամասերի մատչելիություն և կահավորում

Արցախի ՏԻՄ ընտրությունների դիտարկումն ուղղված է եղել նաև տեղամասային կենտրոնների մատչելիությունը գնահատելուն: Խնդիրը կարևոր է դիտարկել հաշմանդամություն ունեցող անձանց քվեարկության գաղտնիության և ինքնուրույն քվեարկելու հնարավորության ապահովման տեսանկյունից: Գնահատվել են մատչելի ձևաչափերով տեղեկատվության առկայությունը, թեքահարթակների առկայությունը, հենաշարժական, ինչպես նաև տեսողության կամ լսողության խնդիրներ ունեցող անձանց համար ինքնուրույն քվեարկության ապահովման այլ պարագաները:

Դիտարկված տեղամասային կենտրոնների 84.8%-ը տեղակայված է եղել որևէ շինության առաջին հարկում, իսկ 15.2%-ը՝ երկրորդ հարկում (Գծապատկեր 1):



Այդ շինություններից 33.3%-ը լիովին անմատչելի է եղել հենաշարժական խնդիրներ ունեցող անձանց համար:

Դիտարկված մյուս տեղամասային կենտրոններում եղել են որոշակի հարմարություններ, սակայն դրանք չեն եղել ամբողջական: Այսպես՝ դիտարկված տեղամասային կենտրոններից միայն 3-ում են առկա եղել թեքահարթակներ: Պետք է արձանագրել, սակայն, որ առկա 3 թեքահարթակներից միայն մեկն է համապատասխանել անհրաժեշտ նվազագույն չափանիշներին: Դիտորդների կողմից տվյալ խնդրի բարձրաձայնմանը տեղամասային կենտրոնների նախագահները պատասխանել են, որ նման դեպքերում քվեարկությունը կազմակերպում են տեղամասից դուրս. «... հենաշարժական խնդիրներ ունեցող

մարդկանց համար ընտրությունը կկազմակերպվի դրսում...»: Այս կարգավորումը նախատեսվում է ԱՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ, որն անհարկի տարբերակում է քվեարկության կարգը: Դիտորդներն ականատես են եղել նման դեպքի, երբ տեղամասային կենտրոն է եկել հենաշարժական խնդիրներ ունեցող անձը, որի համար քվեարկությունը կազմակերպել են դրսում՝ իր մեքենայի մեջ: Դիտորդի խոսքերով՝ «...թեկնածուներից մեկն իր հոր հետ էր եկել տեղամաս, որը դժվարանում էր տեղամաս մտնել, հանձնաժողովի նախագահի մասնակցությամբ ուրիշ ընտրողի խնդրեցին, որ դրսում (մեքենայի մեջ) օգնեն կատարի իր քվեարկությունը»:

Տեղամասային կենտրոնների մատչելիության տեսանկյունից դիտարկվել է նաև տեսողության և/կամ լսողության խնդիրներ ունեցող անձանց քվեարկության կազմակերպման համար համապատասխան անհրաժեշտ միջոցների /հարմարեցումների առկայությունը: Այսպես, դիտարկված տեղամասային կենտրոններից 66.7%-ում նախատեսված չի եղել որևէ հատուկ միջոց տեսողության խնդիրներ ունեցող անձանց ինքնուրույն քվեարկության կազմակերպման համար: Մյուս բոլոր դեպքերում քվեախցիկում առկա են եղել խոշորացույցներ և տեսողության խնդիրների դեպքում անհրաժեշտ այլ պարագաներ:

Տեղամասային կենտրոններից 3-ի քվեասենյակներում քվեախցիկների լուսավորության մակարդակը, դիտորդների գնահատմամբ, եղել է անբավարար: Նման դեպքերում լուսավորությունն ապահովվել է մոմով կամ ընտրողներն օգտագործել են իրենց հեռախոսների լույսերը: Դիտորդի խոսքերով՝ «...մարդիկ մոմի լույսի տակ են քվեարկում, շատ հաճախ օգտագործում են հեռախոսի լույսը..., հեռախոսի օգտագործումը՝ որպես լուսավորման միջոց, պարունակում էր այն ռիսկը, որ ընտրողը կարող է նաև նկարել քվեաթերթիկները»: Վատ և/կամ անբավարար լուսավորությունը ՏՀՀ-ներից մեկում հանդիսացել է վեճի պատճառ:

Քվեարկության գաղտնիության ապահովման տեսանկյունից դիտարկվել է տեղամասային կենտրոնների կահավորումը՝ քվեախցիկների տեղադրությունը: Այսպես, դիտարկված տեղամասային կենտրոնների 27.3%-ում քվեասենյակում քվեախցիկները եղել են իրար մոտ և/կամ որևէ ձևով առանձնացված չեն եղել, ինչը կարող էր խախտել քվեարկության գաղտնիությունը: Խնդրի մասին դիտորդների զգուշացմանը արձագանքել և դրական լուծում են տվել տեղամասային ընտրական հանձնաժողովներից միայն 2-ը:

Դիտարկված տեղամասային կենտրոնների 93.9%-ում, դիտորդների գնահատմամբ, քվեասենյակների տարածքները եղել են բավարար՝ քվեասենյակում գտնվելու իրավունք ունեցող մարդկանց գործունեությունն ու ազատ տեղաշարժն

ապահովելու համար: 6.1%-ում քվեասենյակների տարածքները բավարար չեն եղել քվեարկության բնականոն ընթացքն ապահովելու համար:

Դիտարկված տեղամասային կենտրոններից 18.2%-ում փակցված չի եղել քվեարկության մասին իրազեկող տեղեկատվություն:

Հանձնաժողովի առավոտյան նիստ


Ըստ ԱՀ Ընտրական օրենսգրքի՝ տեղամասային ընտրական հանձնաժողովը քվեարկության օրն իր աշխատանքները սկսում է ժամը 7:00-ին: Դիտարկված ՏՀՀ-ից 51.6%-ում առավոտյան նիստերը սկսվել են 6:59-7:00-ին, 12.9%-ում՝ 5-10 րոպե ուշացումով, իսկ 32.3%-ում 15-37 րոպե ուշացումով: Նիստերն ուշացումով բացելու հիմնական պատճառներից են եղել հանձնաժողովների անդամների ուշացումները, որոնք արդարացվում էին եղանակային անբարենպաստ պայմաններով:

Դիտարկված տեղամասային հանձնաժողովների նիստերից 2-ում անդամների թիվը եղել է 7: Մյուս դեպքերում հանձնաժողովի անդամները եղել են 8 հոգի:

Առավոտյան նիստերին գտնվելու իրավունք չունեցող անձ ներկա է եղել տեղամասերից միայն մեկում՝ եղանակային վատ պայմանների պատճառով նախագահի կողմից ներս հրավիրված ուսուցիչներ: Դիտարկվող տեղամասերից մեկում նիստին փորձել է ներկա գտնվել միևնույն թեկնածուի մեկից ավել վստահված անձ, որը հեռացել է նախագահի կողմից կարգը պարզաբանելուց հետո:

Տեղամասային հանձնաժողովի գործառույթների վիճակահանությունը ողջ օրվա համար իրականացվել է դիտարկվող տեղամասերից 66.7%-ում (Գծապատկեր 2):

Գծապատկեր 2. Արդյո՞ք հանձնաժողովի անդամների գործառույթները սահմանվել են վիճակահանության հիման վրա




30.3%-ում վիճակահանությունը իրականացվել է միայն 1-ին հերթափոխի համար՝ նախատեսելով կրկնել այն հաջորդ հերթափոխերի ժամանակ: Տեղամասներից մեկում հերթափոխը սահմանվել է նախագահի որոշմամբ, առանց վիճակահանության: Մեկ այլ հանձնաժողովի նախագահը նշել է, որ չնայած ողջ օրվա հերթափոխերի համար իրականացված վիճակահանությանը, նա է որոշելու հերթափոխության ժամերը:

Տեղամասերից մեկում քվեարկությունից առաջ 3 քվեատուներից միայն մեկն է եղել պատշաճ կերպով փակված և կնիքված: Խախտումը վերացվել է միայն դիտորդների կողմից այն բարձրաձայնելուց հետո:

Դիտարկված տեղամասերից 7-ում արձանագրված խախտումների վերացման ուղղությամբ հանձնաժողովներն անհրաժեշտ գործողություններ չեն ձեռնարկել:

Դիտորդների գնահատմամբ, տեղամասային հանձնաժողովների նախագահների 21.2%-ը մասամբ է տիրապետել առավոտյան նիստի ընթացքում իր գործառույթներին: Առավոտյան նիստերը ավարտվել են 7:15-ից մինչև 8:25-ը ժամանակահատվածում: Նիստերի ավարտի ժամի վերաբերյալ առավել մանրամասն տես Գծապատկեր 3-ում:

Գծապատկեր 3. Առավոտյան հանձնաժողովի նիստի ավարտի ժամերը (%)



Քվեարկության ընթացք

Սեպտեմբերի 8-ին կայացած Արցախի Հանրապետության ՏԻՄ ընտրությունների քվեարկության դիտարկման ընթացքում արձանագրված խախտումները չեն եղել համատարած և չեն կրել համակարգված բնույթ:


Խախտումները հիմնականում կապված են եղել քվեարկողների, հանձնաժողովի անդամների, ոստիկանության և թեկնածուների ներկայացուցիչների՝ Շնորհակալ օրենսգրքի կարգավորումների ոչ բավարար իմացության, ինչպես նաև թերի իրավակարգավորումների հետ:

- Դիտորդների կողմից արձանագրվել է ընտրողների կողմից քվեաթերթիկները քվեախցիկներից դուրս լրացնելու կամ ծալելու 53 դեպք (դիտարկված տեղամասերից 80%-ում), որոնց մեծ մասը կատարվել է *տարեց մարդկանց* կողմից:
- Հանձնաժողովի անդամների գործառույթների հերթափոխությունը *ընդհանրապես* չի իրականացվել 26 տեղամասում: Հանձնաժողովի

անդամների գործառույթների փոփոխությունը վիճակահանության հիման վրա ոչ միշտ է իրականացվել 7 տեղամասում:

- Միաժամանակ մեկից ավել անձանց (բացառությամբ մանուկների և որպես օգնող գրանցված անձանց) քվեախցիկ մտնելու դեպքեր արձանագրվել են թվով 29 տեղամասում: Ըստ դիտորդների՝ այդ դեպքերի 87%-ը տեղի են ունեցել քվեարկողների չիմացության պատճառով, իսկ 13%-ը՝ ընտրողի քվեարկության վերահսկման նպատակով (Գծապատկեր 4):

Գծապատկեր 4. Միաժամանակ մեկից ավել անձանց քվեախցիկ մտնելու պատճառով



- 22 ՏԸՀ-ների կողմից խախտումները կամ գնահատականները ոչ միշտ են գրանցվել գրանցամատյաններում: Դրանցից 14 դեպքում խախտումներն ընդհանրապես չեն գրանցվել, իսկ 8 դեպքում՝ ոչ միշտ են գրանցվել:
- Դիտարկված 17 տեղամասում հանձնաժողովի անդամներն ընտրողներին ոչ միշտ են ներկայացրել քվեարկության կարգը, իսկ 3-ում էլ ընդհանրապես չեն ներկայացրել քվեարկության կարգը:
- Իրավասու մարմիններն ընդհանրապես միջոցներ չեն ձեռնարկել արձանագրված խախտումները վերացնելու ուղղությամբ 1 տեղամասում, իսկ 12-ում՝ քայլեր ոչ միշտ են ձեռնարկել:
- 11 տեղամասում արձանագրվել են դեպքեր, երբ օգնող անձը քվեաթերթիկում նշում կատարելուց առաջ չի հարցրել ընտրողի կարծիքը:

- Ընտրական ցուցակների անճշտության հետ կապված 10 դեպք է արձանագրվել:
- Ընտրողների կողմից քվեարկելուց հետո քվեարկության մասին այլ անձանց տեղեկացնելու կամ ուղղակի բարձրաձայնելու դեպքեր արձանագրվել են 10 տեղամասում:
- Վիճաբանության դեպքեր գրանցվել են 10 տեղամասային կենտրոնում:
- Տեղամասային կենտրոնում միևնույն թեկնածուի 2 վստահված անձի գտնվելու 5 դեպք է արձանագրվել:
- Դիտորդների կողմից արձանագրվել է 5 դեպք, որոնց ընթացքում ընտրողների կողմից իրենց քվեաթերթիկները լուսանկարվել են:
- Դիտորդի իրավունքների խախտման 5 դեպք է արձանագրվել: Նշյալ դեպքերում եղել են դիտորդներին ուղղված սպառնալիքներ (սահմանափակել են տեղաշարժվելու հնարավորությունները/ ճնշել/ սպառնացել են/ վիճաբանություն է սկսվել): Դեպքերից մեկի պարագայում հանձնաժողովի նախագահը դիտորդին հեռացրել է տեղամասից:
- Գրանցվել է 4 դեպք, երբ ոստիկանության ներկայացուցիչները քվեասենյակում են գտնվել՝ առանց հանձնաժողովի նախագահի հրավերի: Դեպքերը պայմանավորված են եղել եղանակային վատ պայմաններով, իսկ մեկ այլ դեպքում՝ տեղամասային կենտրոնի շինության սխալ ընտրությամբ:
- 4 դեպք է արձանագրվել, երբ թեկնածուն, չհանդիսանալով տվյալ տեղամասի ընտրող, գտնվել է տեղամասային կենտրոնում:
- Արձանագրվել է այլ անձի փաստաթղթով ներկայանալու 3 դեպք, իսկ 8 տեղամասում ընտրողն այլ փաստաթուղթ է ներկայացրել, մեկ դեպքում՝ բարձրաստիճան զինվորականին թույլատրվել է քվեարկել զինվորական գրքույկով, թեև նման հնարավորություն նախատեսված չէ ՏԻՄ ընտրություններում:
- Հանձնաժողովի նախագահի օգնությամբ տեղամասից դուրս քվեարկած հաշմանդամություն ունեցող ընտրողների թիվը դիտարկված տեղամասերում կազմել է 31:

Դիտորդների կողմից արձանագրվել են նաև հետևյալ խախտումների եզակի դեպքեր՝ ընտրողների ստորագրած ցուցակներին ծանոթանալով չքվեարկած քաղաքացիների մասին տեղեկությունների հավաքագրման և/կամ այլ անձանց փոխանցելու, հանձնաժողովի անդամի/ների կողմից ակոնոլի օգտագործման/օգտագործած լինելու, օգնող անձի տվյալները հանձնաժողովի կողմից չարձանագրելու, նույն անձի մի քանի անգամ օգնող հանդիսանալու, տեղամասային կենտրոնի ներսում քարոզչական նյութերի առկայության դեպքեր:

Այդուհանդերձ, արձանագրվել են նաև խնդիրներ՝ չկապված օրինախախտումների հետ: Այդպիսի խնդիրների թվին են պատկանում քվեարկության ծրարների չկիրառումը, չափազանց փոքր քվեատուփերը և քվեարկության գաղտնիությունը ոչ ամբողջությամբ ապահովող քվեախցիկները:

Քվեարկության ընթացքում իրադրությունը տեղամասերի շրջակայքում

Քվեարկության ընթացքում դիտարկում է իրականացվել նաև տեղամասային կենտրոնի շրջակայքում, որի ընթացքում արձանագրվել են հետևյալ խախտումները.

- տեղամասային կենտրոնի շուրջը կամ անմիջապես մուտքի մոտ ընտրողներին որևէ թեկնածուի օգտին կողմնորոշող պաստառներ արձանագրվել են 9 դեպքում, բանավոր քարոզչություն իրականացվել է 2 տեղամասային կենտրոնների շրջակայքում, ծառայություն իրականացնող ոստիկաններն արձագանքել են խախտմանը միայն դեպքերից մեկում, այն էլ դիտորդի կողմից խախտումը արձանագրելուց հետո:
- երթուղային տաքսիներով կամ այլ մեքենաներով մարդկանց խմբերով տեղափոխումը նկատվել է 10 տեղամասային կենտրոնների շրջակայքում, ընդհանուր առմամբ՝ շուրջ 36 դեպք,
- դեպի տեղամասային կենտրոն տանող ճանապարհներին կամ հարող տարածքում մարդկանց կուտակումներ նկատվել են 19 տեղամասային կենտրոնների շրջակայքում, որից 12-ում կուտակումները եղել են տեղամասային կենտրոնից 50 մետր շառավիղի սահմաններում, 5-ում կրել են սիստեմատիկ բնույթ: Հարկ է նշել, որ այդ կուտակումների զգալի մասը դիտորդների կողմից

գնահատվել է որպես «բնական» (եղանակային պայմաններով առաջացած՝ այդ օրը անձրև էր), ծառայություն իրականացնող ոստիկանները ոչ միշտ են կարողացել պատշաճ կերպով արձագանքել իրավիճակին:

Ձայների ամփոփում

Տեղամասային կենտրոնները հիմնականում փակվել են ճիշտ ժամը 20:00-ին: Դիտարկված տեղամասերից միայն մեկն է փակվել ուշացումով՝ ժամը 20:05-ին:

Ձայների ամփոփման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձինք են ներկա գտնվել 8 տեղամասային կենտրոնների քվեարկության սենյակում: 7 դեպքում այդ անձինք եղել են ոստիկաններ, իսկ մեկում՝ անհայտ անձ:

Ոստիկանների՝ տեղամասում գտնվելու հիմնական պատճառ է եղել նրանց հատկացված տարածքի բացակայությունը, որի պատճառով ոստիկաններն անձրևից պաշտպանվել են քվեասենյակում: Մեկ դեպքում հանձնաժողովն ինքն է քվեասենյակում աթոռներ նախատեսել ոստիկանների համար:

Մեկ դեպքում քվեարկության արդյունքների ամփոփման ընթացքում քվեասենյակում ոստիկանների ներկայության անթույլատրելիության մասին դիտորդի զգուշացումից (դիտորդը տեղեկացրել է, որ կգանգահարի ԿԸՀ) հետո հանձնաժողովի նախագահը դուրս է հրավիրել ոստիկաններին: Հեռացող ոստիկանները սպառնացել են տվյալ դիտորդին: Խնդիրը կարգավորվել է ԿԸՀ քարտուղարի միջամտությամբ:

Ամփոփման ժամանակ դիտարկվել է թեկնածուի կողմից հաշվարկին անմիջական մասնակցության (և ոչ դիտարկման) դեպք: Դիտորդի նկատողությունից հետո հանձնաժողովի նախագահը թույլ չի տվել, որ թեկնածուն մասնակցի քվեաթերթիկների հաշվարկման գործընթացին:

Տեղամասերից մեկի հանձնաժողովը տեղամասը փակելուց հետո կես ժամով ընդմիջում է իրականացրել ձայների ամփոփման նիստը անհապաղ սկսելու փոխարեն: Քվեարկության ձայների հաշվարկը կամայականորեն ընդհատվել է 2 տեղամասային հանձնաժողովի կողմից՝ ծխելու նպատակով, ընդ որում՝ հանձնաժողովներից մեկը այդպիսի ընդմիջում կազմակերպել է 3 անգամ՝ 25, 20 և 15 րոպեով:

Ըստ դիտորդների՝ քվեարկության ամփոփման կարգին մասամբ է տիրապետել միայն 11 տեղամասային հանձնաժողովի նախագահ:

5 տեղամասային կենտրոններում, ըստ դիտորդների, քվեաթերթիկները հաշվարկվում էին ոչ համաձայն հաստատված կարգի, օրինակ՝ եղել են դեպքեր, երբ քվեաթերթիկները միանգամից ամբողջությամբ հանվել են, տեսակավորվել ըստ գույների և բոլոր հանձնաժողովի անդամների կողմից առանձնացվել որևէ թեկնածուի քվեաթերթիկները:

Տվյալների գրանցման հետ կապված էլ 2 դեպք է արձանագրվել: Մեկ տեղամասում գրանցամատյանում տվյալները մատիտով են գրանցվել, ապա՝ գրիչով: Մեկ տեղամասում էլ փորձ է արվել անճշտություններ շտկելու հիմնավորմամբ իրականությանը չհամապատասխանող թվեր գրանցել արձանագրություններում կամ փոխել ելակետային թվերը: Դիտորդի դիտարկումից հետո խախտումը կանխվել է:

Մեդիա մշտադիտարկում

Ընդհանուր պատկեր

Արցախի Հանրապետությունում լրատվական դաշտն առանձնանում է բազմազանության և, որպես արդյունք, նաև բազմակարծության բացակայությամբ:

Հանրային հեռուստաընկերությունը (Արցախ TV) 24-ժամյա եթեր չի ապահովում, եթերը սկսվում է ժամը 16:00-ից և շարունակվում մինչև կեսգիշեր: Այդ ընթացքում քաղաքական իրադարձություններին անդրադարձ է կատարվում լուրերի երեք թողարկումներով: Քաղաքական հարցերը քննարկվում են նաև շաբաթական երկու անգամ հեռարձակվող «Օրը հարցազրույցի» (որպես կանոն՝ մեկ հյուրի մասնակցությամբ հարցազրույց), ինչպես նաև շաբաթական մեկ անգամ հեռարձակվող «Օրակարգ» կլոր սեղան քննարկման շրջանակներում:

Ներարցախյան իրադարձությունները լուսաբանող միակ տպագիր թերթը «Ազատ Արցախն» է, որը լույս է տեսնում պետական դոտացիաների հաշվին: Հաշվետու ժամանակահատվածում մշտադիտարկման է ենթարկվել դրա առցանց տարբերակը՝ artsakhtert.com: Քարոզարշավի ընթացքում կայքը հարցազրույց է հրապարակել Ստեփանակերտի քաղաքապետի՝ բոլոր 5 թեկնածուների հետ, որոշակիորեն անդրադարձել է նաև ԿԸՀ նիստերին:

Ներքին իրադարձություններին անդրադառնում է նաև «Արցախ Պրեսս» լրատվական գործակալությունը (artsakhpress.am), որը փոխկապակցված է քաղաքական ուժերից մեկի հետ: Մշտադիտարկման ենթարկված

Ժամանակահատվածում կայքը քարոզարշավին գրեթե չի անդրադարձել: Հարցազրույցներ են հրապարակվել Ստեփանակերտի քաղաքապետի 5 թեկնածուներից 3-ի հետ: Կայքն անցկացրել է sms քվեարկություն՝ պարզելու ՏԻՄ ընտրություններին մասնակցող թեկնածուների վարկանիշները: Քվեարկության արդյունքները պարբերաբար ներկայացվել են կայքի լրահոսում:

Առցանց տիրույթի արցախյան սեզմենտում գործող մի քանի այլ լրատվական կայքեր ավելի շուտ բլոգ են հիշեցնում և փոքր լսարանի պատճառով մեծ ազդեցություն չեն կարող ունենալ:

Նման պայմաններում քաղաքական ուժերն իրենց ուղերձը լսարանին հասցնում են Ֆեյսբուք սոցցանցի միջոցով:

Արցախյան լսարանի վրա որոշակի ազդեցություն է ունենում նաև հայաստանյան մեդիան՝ հեռուստաալիքները և առցանց տիրույթում գործող լրատվամիջոցներն ու Ֆեյսբուքի հայաստանյան սեզմենտը:

Արցախի բնակչության շրջանում լրատվամիջոցների և հեռուստաալիքների վարկանիշի ուսումնասիրության որևէ հետազոտություն չկա:

Հանրային հեռուստաընկերություն

Արցախի Հանրապետության Ընտրական օրենսգրքում պարտավորեցնող դրույթ չկա այն մասին, որ ՏԻՄ ընտրություններում (այդ թվում՝ Ստեփանակերտի ավագանու ընտրություններում) Հանրային ռադիոն և Հանրային հեռուստաընկերությունը պարտավոր են հավասարաբար պայմաններով անվճար և վճարովի եթերաժամանակ տրամադրել թեկնածուներին:

Արդյունքում՝ մշտադիտարկման ենթարկված ժամանակահատվածում (օգոստոսի 15-սեպտեմբերի 9) Արցախի Հանրային հեռուստաալիքը (Արցախ TV) ընտրություններին անդրադարձել է հիմնականում լուրերի թողարկումներում: Ուշագրավ է, որ քաղաքական բնույթի «Օրը հարցազրույց» հաղորդումը նշված ժամանակահատվածում զերծ է մնացել քաղաքական բովանդակությունից: Քարոզարշավի ընթացքում հաղորդման շրջանակում ընտրությունների թեմային (և ընդհանրապես քաղաքական անցուդարձին) անդրադարձ կատարվել է ընդամենը մեկ անգամ, երբ հրավիրվել էր ԿԸՀ փոխնախագահ Եղիշե Արզումանյանը: Քարոզարշավի ողջ ընթացքում «Օրը հարցազրույցի» տաղավար քաղաքական գործիչներ չեն հրավիրվել, ընտրությունների թեմային անդրադարձ չի կատարվել: Իսկ արդեն քվեարկության հաջորդ օրը հաղորդման շրջանակում ընտրությունների արդյունքների վերաբերյալ հարցազրույցի է հրավիրվել քվեարկության օրը ՀՀ ԱԺ դիտորդական պատվիրակությունը գլխավորած Վլադիմիր Վարդանյանը:

Նույն կերպ «Օրակարգ» հաղորդումը հաշվետու ժամանակահատվածում եթեր է հեռարձակվել միայն մեկ անգամ. հենց այդ հաղորդման շրջանակում էլ կազմակերպվել է Ստեփանակերտի քաղաքապետի թեկնածուների միջև բանավեճը: Արցախի TV-ից մեզ հետ զրույցում նշել են, որ քարոզարշավի մեկնարկից դեռ շատ ավելի վաղ «Օրակարգ» հաղորդումը եղել է արձակուրդում:

Փաստացի, ընտրությունների թեմային Արցախի TV-ն անդրադարձել է գլխավորապես միայն լուրերի թողարկումներում, թեման ակտիվացել է օգոստոսի 21-ից, առանձին բացառություններով ընտրությունների թեմային անդրադարձ է կատարվել ամեն օր:

Հատկանշական է, սակայն, որ թեկնածուների քարոզարշավը, որպես այդպիսին, ընդհանրապես չի լուսաբանվել: Փոխարենը՝ պատրաստվել են ռեպորտաժներ, որոնցում անդրադարձ է կատարվել կամ ընտրությունների կազմակերպչական ընթացքին, կամ թեկնածուների նախընտրական ծրագրերին՝ նրանց հետ փոքրիկ հարցազրույցների տեսքով: Ընդհանուր առմամբ, այդպիսի ռեպորտաժները կրել են հավասարակշռված բնույթ, մինևույն ռեպորտաժի շրջանակում հավասար ժամանակահատված է հատկացվել բոլոր թեկնածուներին:

Քվեարկության նախօրեին՝ լուրջան օրը, հեռուստաալիքն անդրադարձել է ընտրությունների վերաբերյալ որոշակի ընթացակարգային հարցերի, թեկնածուների մասին որևէ ռեպորտաժ չի ներկայացրել՝ այդպիսով չխախտելով լուրջան օրվա կանոնները: Բուն քվեարկության օրը լուրերի թողարկումն աշխատել է արտակարգ ռեժիմով, ընտրությունների ընթացքը լուսաբանվել է բոլոր շրջկենտրոններում: Այնուամենայնիվ, քարոզչության որոշակի տարրեր են նկատվում Ստեփանակերտի քաղաքապետի թեկնածուների քվեարկության մասին պատմող [ռեպորտաժում](#): Դրանում առանձին թեկնածուների դեպքում ներկայացվում է, թե ինչ են նրանք պատրաստվում անել ընտրվելու դեպքում: Դա կարող է դիտվել որպես քարոզչություն, ինչը ԱՀ Ընտրական օրենսգրքով արգելված է քվեարկության օրը:

Բացի լրատվական հաղորդումներից՝ ընտրությունների թեմային անդրադարձ է կատարվել նաև «Ոգու նժար» ոչ լրատվական բնույթի հաղորդաշարի թողարկումներից մեկում, որում խոսվել է ազգային և կրոնական փոքրամասնությունների ընտրական իրավունքից:

Նույն հաղորդման մեկ այլ թողարկում պատմում է Մարտակերտի շրջանի Տոնաշեն համայնքի մասին: Դրանում անդրադարձ է կատարվում գյուղի խնդիրներին, նաև հարցազրույց կա համայնքի ղեկավար Մուշեղ Եղիզարյանի հետ: Ընդ որում, թեև հաղորդման մեջ չի հիշատակվում, բայց Եղիզարյանը ՏԻՄ ընտրություններին

համայնքից առաջադրված միակ թեկնածուն էր: Հաղորդման շրջանակում նա խոսում է գյուղի խնդիրների և դրանց լուծման հնարավորության մասին, հաղորդավարի կողմից էլ ներկայացվում է դրական լույսի տակ՝ որպես «տասնամյակից ավելի իր համայնքի ցավով ապրած մարդ», որը «լավ գիտի գյուղ զարգացնելու տեսլականի մասին»:


Թեև հաղորդումը ինքնին քաղաքական բնույթ չունի, տվյալ թողարկման մեջ էլ ընտրությունների թեմային որևէ անդրադարձ չկա, բայցևայնպես, գործող համայնքապետի (որը նաև առաջադրված է) մասնակցությամբ նման թողարկումը պաշտոնական քարոզարշավի ժամանակ կարող է դիտվել որպես անհավասար լուսաբանում:

Արցախ TV-ն քարոզարշավի երկրորդ կեսին սկսել է հեռարձակել «Իրազեկ քաղաքացիների միավորման Ստեփանակերտի գրասենյակի» կողմից պատրաստված սոցիալական գովազդները՝ ուղղված ընտրողների իրազեկվածության բարձրացմանը: Այնուամենայնիվ, Հանրային հեռուստաընկերությունը չի համաձայնել սոցիալական գովազդի հեռարձակման համար տրամադրել անվճար եթերաժամանակ: ԱՀ Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահ Արսեն Առստամյանը դա պատճառաբանել է՝ վկայակոչելով ԱՀ «Գովազդի մասին» օրենքը, որի համաձայն՝ սոցիալական գովազդի արտադրության և տեղաբաշխման ծախսերը կատարվում են գովազդատուի միջոցների հաշվին:

Բանավեճ

Քարոզարշավի ընթացքում Արցախի Հանրային հեռուստատեսության եթերում Ստեփանակերտի քաղաքապետի թեկնածուների միջև կազմակերպվել է բանավեճ «Օրակարգ» հաղորդման շրջանակում: Բանավեճին, սակայն, փաստացի մասնակցել են առաջադրված հինգ թեկնածուներից երկուսը՝ Գրիգորի Սահակյանը և Արեգ Ավագյանը: Հանդիպման սկզբում հաղորդավարը ներկայացրել է, որ բանավեճին մասնակցող երկու թեկնածուները՝ Գրիգորի Սահակյանը և Արեգ Ավագյանը, գրավոր հաստատել են իրենց մասնակցությունը: Թեկնածուներից Դավիթ Սարգսյանը առողջական պատճառներով չի կարողացել մասնակցել և գրավոր տեղեկացրել է այդ մասին: Մյուս թեկնածուն՝ Արմեն Հակոբյանը, գրավոր հրաժարվել է մասնակցել, իսկ հետո բանավոր գրույցում հավաստիացրել է, որ կփորձի միանալ հաղորդման ընթացքում: Հինգերորդ թեկնածուն՝ Արայիկ Ավանեսյանը, ըստ հաղորդավարի, «գրավոր եղանակով չի պատասխանել մեր հրավերին, այնուհետև բանավոր եղանակով նրանից ստացել ենք մերժում»: Ինքը՝ Արայիկ Ավանեսյանը, Ֆեյսբուքի իր էջում տարածել է [տեսանյութ](#) բանավեճի անցկացման տաղավարից: Կից գրառմամբ նա տեղեկացրել է, որ Հանրայինը սխալ է ներկայացրել իր բացակայության պատճառը, ավելին՝ ինքը եղել է տաղավարում. «Մուտ տեղեկություններ Արցախի Հանրային հեռուստատեսության կողմից: Նրանց կողմից կազմակերպված դեբատների նկարահանման ընթացքում գտնվել եմ տաղավարում, ցանկացել եմ միանալ նկարահանմանը, սակայն ինձ թույլ չեն տվել»: Մեզ հետ գրույցում Արայիկ Ավանեսյանն ասել է, որ թեկնածուների հետ ներքին համաձայնություն է եղել չմասնակցել բանավեճին (քանի որ մեկ անգամ ոչ ֆորմալ բանավեճ արդեն եղել էր, և իրենք պայմանավորվել էին քարոզարշավի վերջին օրերին զբաղվել քարոզչությամբ), սակայն վերջին պահին իմացել է, որ բանավեճը տեղի է ունենալու, ուշացած հասել է հեռուստարձևերություն, սակայն իրեն թույլ չեն տվել բանավեճի կեսից միանալ, չնայած որ նկարահանումն ուղիղ եթերում չէր: Հեռուստարձևերության ներկայացուցիչը մեզ հետ գրույցում հավաստիացրել է, որ գրավոր եղանակով պատասխան չստանալուց հետո բանավեճի նախորդ օրը իրենք կապ են հաստատել Ավանեսյանի շտաբի հետ և արդեն բանավոր մերժում ստացել: Հեռուստարձևերության ներկայացուցիչը նշել է, որ, իսկապես, բանավեճի կեսից Ավանեսյանը եկել է տաղավար, բայց պատշաճ կերպով ցանկություն չի հայտնել միանալու բանավեճին, այլ թեկնածուներից մեկին մեղադրել է բանավեճին չմասնակցելու պայմանավորվածությունը խախտելու մեջ: Հեռուստարձևերությունից մեզ հավաստիացրել են, որ այդ միջադեպից հետո փորձել են ևս մեկ անգամ բանավեճ կազմակերպել, բայց համաձայնություն չի եղել թեկնածուների միջև:

Ընդհանուր առմամբ՝ բանավեճը տևել է 39 րոպե 41 վայրկյան (2381 վայրկյան): Այն իր ձևաչափով զգալիորեն տարբերվում է նախընտրական քարոզարշավի բանավեճից և ավելի շուտ հիշեցնում է կլոր սեղան հանդիպում թեկնածուների հետ, որում վերջիններս ներկայացնում են իրենց նախընտրական ծրագրերը: Երկու թեկնածուներին տրվում է միևնույն հարցը, որին պատասխանելու համար նրանց առջև ժամանակի սահմանափակում չի դրվում: Արդյունքում, թեկնածուներից մեկը միևնույն հարցին պատասխանում է մոտ 4 րոպեում, մյուսը մոտ 1 րոպեում: Դրա արդյունքում էլ խախտվում է թեկնածուներին հատկացված ուղիղ խոսքի հավասարակշռությունը: Ավելին, ստորև ներկայացված գծապատկեր 5-ից երևում է, որ հաղորդման ընթացքում ոչ միայն տարբերվում է երկու թեկնածուներին տրամադրված եթերաժամանակը, այլև, փաստացի, հաղորդավարը բանավեճի ընթացքում ավելի շատ է խոսել, քան թեկնածուներից Արեգ Ավագյանը (գծապատկերում հատկացված ժամանակը ներկայացված է վայրկյաններով):



Ոչ ֆորմալ բանավեճ

Նախքան Հանրային հեռուստաալիքով կազմակերպված բանավեճը քարոզարշավի ընթացքում տեղի է ունեցել ևս մեկ՝ ոչ ֆորմալ բանավեճ: Այն արդեն մոնտաժված տարբերակով երեք փուլով՝ օգոստոսի 26-ին (2099 դիտում), օգոստոսի 31-ին (1350 դիտում) և սեպտեմբերի 2-ին (966 դիտում) տեղադրվել է Հրայր Ավետիսյանի յութուբյան ալիքում: Նույն՝ երեք մասով հրապարակված բանավեճը ֆեյսբուքյան պաշտոնական էջում գումարային ունեցել է ավելի քան 50 հազար դիտում: Բանավեճին մասնակցել են Ստեփանակերտի քաղաքապետի հիևգ առաջադրված թեկնածուներից երեքը:



«Քաղաքապետների ակումբ»

«Քաղաքապետների ակումբ» կոչվող այս նախագիծը իր ձևաչափով ավելի նման է բանավեճի, չնայած որ ուղիղ եթերով չի անցկացվել և մոնտաժվել է: Բանավեճն ունի հստակ ձևաչափ. սկզբում թեկնածուները սահմանված հերթականությամբ ներկայացնում են՝ ինչու են առաջադրվել, ինչ ծրագրով են հավակնում քաղաքապետի պաշտոնի: «Անհարմար հարցեր» փուլում թեկնածուներին հնարավորություն է տրվում մեկական հարց ուղղել մրցակիցներին, ինչից բոլոր թեկնածուներն օգտվում են: Վերջում թեկնածուներից յուրաքանչյուրը պատասխանում է այն հարցին, թե ինչու պետք է իրեն ընտրեն և չընտրեն իր մրցակիցներին: Թեև բանավեճի ընթացքում վարողը չի նշում՝ որքան ժամանակ է հատկացվում յուրաքանչյուր թեկնածուի, բայց մոնտաժված հաղորդման ժամանակ արդեն բոլոր 3 թեկնածուներին տրվում է հավասար խոսելաժամանակ, վարողի խոսքը հասցված է նվազագույնի:

Անհանդուրժողականություն, ատելության խոսք

Քարոզարշավի ընթացքում Հանրային հեռուստաալիքի եթերում և լրատվամիջոցներում ընդհանուր առմամբ բացակայել է ոչ քաղաքական բառապաշարի կիրառումը քարոզարշավի թեկնածուների նկատմամբ (այդ թվում թեկնածուների կողմից միմյանց նկատմամբ):

Բացառություն է կազմում Հանրային հեռուստաալիքի «Ոգու նժար» հաղորդման՝ սեպտեմբերի 6-ի [թողարկումը](#), որի շրջանակում անդրադարձ է կատարվել ազգային և կրոնական փոքրամասնությունների ընտրական իրավունքին: Դրանում ԱՀ Մշակույթի և սպորտի հարցերի նախարարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժնի

պետ Աշոտ Սարգսյանը բավականին դրական է արտահայտվում ազգային փոքրամասնությունների՝ իրենց ընտրական իրավունքն իրացնելու մասին, մինչդեռ կրոնական փոքրամասնությունների վերաբերյալ նա նշում է, որ որոշ «աղանդներ» իրենք են հրաժարվում մասնակցել ընտրություններին, իսկ ԱՅ Սահմանադրության մեջ ընտրական իրավունքն իրացնելու պարտադրանք չկա: Հաղորդավարն էլ իր հերթին նշում է, որ «աղանդները ազգի և պետության քայքայման նպաստավոր էլեմենտներ են», իսկ բանախոսը պնդում է, թե կրոնական «աղանդները» վտանգ են ներկայացնում պատերազմական վիճակում գտնվող երկրին, նույնպիսի վտանգ ներկայացնում է Արցախում բազմակուսակցականությունը: «Ի՞նչ է նշանակում 16 կուսակցություն, այսինքն 16 գաղափարախոսություն... Դա ընդհանրապես հանդուրժել չի կարելի», - ասում է նա:

Ատելության խոսքի որոշակի դրսևորումներ նկատվել են գլխավորապես Ֆեյսբուք սոցցանցում՝ հիմնականում Էջերի և Ֆեյք օգտատերերի կողմից, չնայած եղել են նաև իրական օգտատերեր:

Ատելության խոսքի ամենավառ դրսևորումները նկատվել է ՀՀ-ից դիտորդական 2 առաքելությունների նկատմամբ: Հարկ է նշել, որ, այդ առաքելությունների նկատմամբ հակաքարոզչությանը մասնակից են եղել նաև Ֆեյսբուքի հայաստանյան սեգմենտի ներկայացուցիչներ:

Ընդհանուր առմամբ առցանց տիրույթում բացասական է ներկայացվել ոչ միայն ՀՀ-ից դիտորդական առաքելությունների հավատարմագրման թեման, այլև Արցախում «Իրազեկ քաղաքացիների միավորման Ստեփանակերտի գրասենյակի» բացումը, ինչպես նաև կազմակերպության երևանյան գրասենյակի ծրագրերի համակարգող Դանիել Իոաննիսյանի մասնակցությամբ Արցախում ոստիկանական համակարգի համար ընտրությունների նախաշեմին կազմակերպված դասընթացը:

Փորձեր են կատարվել դա ներկայացնել որպես միջամտություն Արցախի ներքին գործերին, որոշ օգտատերերի կողմից կասկածի տակ է դրվել առաքելությունների կոմպետենտությունն ու ոչ կանխակալ լինելը: Եղել են նաև մանինպուլյատիվ պնդումներ (անգամ տարածվել են տեսանյութեր) «Սորոսյան պլանի» համատեքստում, թե դիտորդական առաքելություն իրականացնող երկու կազմակերպությունները «սերտ կապեր ունեն Սորոսի հետ», որի նպատակն է «կործանել Հայաստանը» և «հողեր հանձնել», և փաստացի այժմ «Սորոսը մտնում է Արցախ»: Այս համատեքստում մի շարք դեպքերում քննադատությունն անցել է կոռեկտության սահմանները՝ վերածվելով անձնական վիրավորանքների և ատելության խոսքի:

Այսպիսով, Արցախի Ընտրական օրենսգրքում ՏԻՄ ընտրությունների վերաբերյալ լրատվամիջոցների (այդ թվում Հանրային հեռուստաընկերության) կողմից քարոզարշավի հավասար լուսաբանման դրույթի բացակայությունը հանգեցրել է նրան, որ թեկնածուների քարոզարշավը, որպես այդպիսին, ընդհանրապես չի լուսաբանվել: Հանրային հեռուստաընկերությունը ռեպորտաժների տեսքով բալանսավորված ձևով անդրադարձել է բոլոր շրջկենտրոնների թեկնածուների նախընտրական ծրագրերին: Հանրային հեռուստաընկերության կողմից դրական երևույթ էր Ստեփանակերտի թեկնածուների միջև բանավեճի կազմակերպումը, այնուամենայնիվ, այն իր նպատակին կծառայեր, եթե դրան մասնակցեին բոլոր թեկնածուները, և այն ունենար բանավեճի հստակ ձևաչափ, հեռարձակվեր ուղիղ եթերով և թեկնածուներին տրամադրվեր հավասար եթերաժամանակ:

Առցանց տիրույթի արցախյան սեգմենտում գործող լրատվամիջոցները պասսիվ «նախընտրական» լրահոսի պատճառով չէին կարող որևէ ազդեցություն ունենալ հանրային կարծիքի ձևավորման վրա:

Նման պայմաններում պարարտ հող է առաջացել ֆեյսբուքյան տիրույթում քարոզչություն իրականացնելու համար: Ու թեև քարոզարշավին մասնակցող թեկնածուները հակաքարոզչությամբ չեն զբաղվել, այնուամենայնիվ, ֆեյսբուքյան տիրույթում որոշ թեկնածուների, և հատկապես դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների նկատմամբ հակաքարոզչությունը որոշ դեպքերում վերածվել է աստելության խոսքի:

Ամփոփում

Այսպիսով՝ կարելի է արձանագրել, որ Արցախի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների՝ 2019 թվականի սեպտեմբերի 8-ի ընտրությունները, թերություններով հանդերձ, անցել են մրցակցային պայմաններում և առանց քվեարկության արդյունքների վրա էական ազդեցություն թողնող խախտումների: Ընտրությունների կազմակերպման և իրականացման համար պատասխանատու հանրային կառավարման մարմինները, մասնավորապես՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ու ոստիկանությունը, առկա հնարավորությունների և օրենսդրության սահմաններում գործադրել են բոլոր հնարավոր միջոցները՝ ընտրությունները առավել ժողովրդավարական ստանդարտներին համապատասխան անցկացնելու համար: Այդուհանդերձ, քվեարկության գաղտնիության, թեկնածուների կողմից հանրային ռեսուրսների հավասար հասանելիության, հնարավոր ընտրախախտումների կանխարգելման և մի շարք այլ հարցերում առկա էին էական խնդիրներ, որոնց պատճառները, գերակշռապես, կապված էին օրենսդրական կարգավորումների և հանրային հեռուստաընկերության աշխատառձի հետ:

Առաջարկություններ

Արցախի Հանրապետությունում ընտրությունները ժողովրդավարական չափանիշներին ավելի մոտեցնելու համար առաջնահերթ պետք է փոփոխվի ընտրական օրենսդրությունը: Թեև նոր Ընտրական օրենսգիրքն արդեն իսկ ընդունված է, սակայն դրանով դեռևս բաց են մնում մի շարք խնդիրներ: Չլուծված խնդիրների ցանկին է դասվում քվեարկության գաղտնիության ապահովման մեխանիզմների ապահովումը, ինչպիսին են քվեարկության ծրարների ներդրումը: Օրենսդրական ու ենթաօրենսդրական իրավական ակտերով կարգավորվող հարցերի և իրավակիրառ պրակտիկայի բարելավմանն ուղղված մանրամասն

առաջարկություններով «Իրազեկ քաղաքացիների միավորումը» հանդես կգա
առանձին: